

Նաբե ՍԱՀԱԿՅԱՆ

Հայ-Ռուսական համալսարանի Իրավունքի և քաղաքականության ինստիտուտի  
Քաղաքացիական իրավունք և քաղաքացիական դատավարության ամբիոնի հայցորդ

Ազատ ԴՈՒՆԱՍԱԼՅԱՆ

դատավորի թեկնածուի հավակնորդ

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ (ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ) ՄՆԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Ներկայիս աշխարհաքաղաքական իրողությունը բնութագրող երևույթը՝ համաշխարհայնացումը «գլոբալիզացիա», քափանցում է ամենուր, կլանում է ամեն ինչ, հավակնում է դառնալու ժամանակի գլխավոր փիլիսոփայությունն ու միևնույն ժամանակ՝ ժամանակի գլխավոր մարտահրավերը<sup>1</sup>:

Համաշխարհայնացումն իրենից ներկայացնում է ունիվերսալի և պարտիկուլյարի անհաշտ պայքար, որի ելքն ի սկզբանե վճռված է հոգուտ ունիվերսալի: Նման պայմաններում ժամանակակից մշակույթներն ու սոցիումներն առավել կամ նվազ հաջողությամբ փորձում են համագուգակցել ազգերի միջև սահմանների ու տարբերությունների վերացումը նրանցից յուրաքանչյուրի ինքնատիպության և ներքին ամբողջականության հետ<sup>2</sup>: Համաշխարհայնացման պայմաններում միջազգային հանրության «իմը և քոնը» գիտակցությունն աստիճանաբար զիջում է «մերը» գիտակցությանը<sup>3</sup>: Դա պայմանավորված է մարդկության առջև ծառայող բնական և հումանիտար բնույթի հիմնախնդիրներով, որոնց շարքին կարող ենք դասել նաև միջազգային սնանկության հիմնախնդիրը:

Միջազգային սնանկության վերաբերյալ իրավական կարգավորումների, դրանց կիրառման պրակտիկայի, միջազգային սնանկության իրավահարաբերությունների վերաբերյալ տեսական մոտեցումների ուսումնասիրությունը և վերլուծությունը կարևոր նշանակություն ունի

միջազգային սնանկության հիմնախնդրի բացահայտման համար:

Այսպես, տարբեր պետությունների տնտեսությունների միջազգայնացման պայմաններում լուրջ խոչընդոտներ են առաջանում միջազգային սնանկության համատեքստում, ինչը պայմանավորված է պարտապանին սնանկ ճանաչելու և պարտատերերի պահանջների բավարարման հետ կապված հարաբերությունների կարգավորման հետ: Պատճառները մի քանիսն են.

- անվճարունակ պարտապանը և պարտատերերը կարող են ունենալ ազգային տարբեր պատկանելիություն, կամ
- պարտապանի գույքը, որի վրա պարտատերերը կարող են բռնագանձում տարածել, կարող է գտնվել տարբեր պետությունների տարածքում, կամ
- սնանկության իրավական կարգավորման ազգային համակարգերը կարող են էականորեն տարբերվել միմյանցից: Այդ տարբերությունները կարող են վերաբերել հարցերի այնպիսի շրջանակի, ինչպիսիք են անձին սնանկ ճանաչելու համար անհրաժեշտ հատկանիշները, որպես սնանկության վարույթի պարտապան հանդես եկող անձանց շրջանակը, պարտապանի սնանկության գործով կիրառման ենթակա ընթացակարգերը, սնանկության գործը վարելու դատական

ՀՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ 2019 7 - 8 (241-242)

ԴԱՏԱԿԱՆ  
Իշխանություն



կարգը և սնանկության մի շարք այլ հարցեր:

Նման պայմաններում առաջ է գալիս միջազգային (անդրսահմանային) սնանկության խնդիրը, որը մեկ կամ երկու պետության հոգածության առարկա չէ, այլ յուրաքանչյուր պետության, որպես համաշխարհային տնտեսության մասնակցի առջև ծառայող հիմնախնդիր, որի լուծումը վեր է յուրաքանչյուր կոնկրետ պետության կամ ազգի հնարավորություններից, ուստի և այստեղ անհրաժեշտ է ջանքերի և հնարավորությունների համախմբում՝ կոնսոլիդացիա, իսկ ամենից առաջ՝ նման համախմբման անհրաժեշտության գիտակցում<sup>4</sup>: Այս գիտակցումն իր արտացոլումն է ստացել մի շարք միջազգային-իրավական փաստաթղթերում: Այսպես, ՄԱԿ-ի Կանոնադրության 1-ին հոդվածում սահմանվում է, որ համաշխարհային հանրության միավորման հիմքում ընկած նպատակներից մեկն էլ «միջազգային համագործակցումն է միջազգային տնտեսական, սոցիալական, մշակութային և մարդասիրական բնույթի խնդիրները հաղթահարելու համար»: Ի գալրագումն ՄԱԿ-ի կանոնադրության՝ ՄԱԿ-ի թիվ 3281 բանաձևով ընդունված Պետությունների տնտեսական իրավունքների և պարտականությունների Խարտիայում սահմանվում է. «Միջազգային համագործակցությունը համարվում է բոլոր պետությունների միասնական նպատակն ու ընդհանուր պարտականությունը»<sup>5</sup>:

Նշենք, որ միջազգային սնանկության առանձնահատկությունը սնանկության գործընթացում օտարերկրյա տարրի առկայությունն է: Ինչպես արդեն վերոգրյալում հիշատակեցինք, որպես օտարերկրյա տարր մի դեպքում կարող է հանդես գալ օտարերկրյա պարտատերերի կամ պարտապանի առկայությունը, մեկ այլ դեպքում պարտապանի նկատմամբ պահանջի իրավունքը կարող է ծագել օտարերկրյա պետություններում և այլն<sup>6</sup>:

Այսպես, միջազգային սնանկության իրավական հասկացության վերաբերյալ միասնական մոտեցում գոյություն չունի: ՄԱԿ-ի միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի (ՅՈՒՆՍԻՏՐԱԼ) կողմից միջազգային սնանկությունը մեկնաբանվում է որպես իրավիճակ, երբ պարտապանի ակտիվները գտնվում են մեկից ավելի պետությունների տարածքում, կամ, երբ սնանկության վարույթին մասնակցում են պարտապանի օտարերկրյա պարտատերերը:

Ռուս հեղինակ Լ.Պ. Անուֆրիևան միջազգային սնանկությունը բնորոշում է որպես միջազգային մասնավոր իրավունքի ինստիտուտ, որը կարգավորում է այն իրավահարաբերությունները, որոնց մասնակցում են անվճարունակ պարտապանը և վերջինիս օտարերկրյա պարտատերերը, ինչպես նաև այն իրավահարաբերությունները, երբ անվճարունակ պարտապանի գույքը գտնվում է տարբեր պետություններում: Լ. Պ. Անուֆրիևան, տալով նշված երևույթի բնութագիրը, ընդգծում է, որ ինչպես միջազգային մասնավոր իրավունքի մնացած բոլոր դրսևորումներում, այնպես էլ տվյալ պարագայում իրավահարաբերությունը պետք է բնորոշվի տարբեր պետությունների իրավական կարգավորումների միջև իրավաբանական կապի միջոցով<sup>7</sup>:

Մենք համակարծիք ենք Լ. Պ. Անուֆրիևայի տեսակետի հետ առ այն, որ միջազգային սնանկությունը միջազգային մասնավոր իրավունքի ինստիտուտ է, քանի որ ի վերջո այն կոչված է կարգավորելու գլոբալացվող մասնավոր հարաբերությունների որոշակի ծավալը՝ օտարերկրյա տարրի առկայությամբ ընթացող սնանկության վարույթները:

Անդրսահմանային սնանկությունը հենվում է երկու հիմնական սկզբունքի վրա՝ համընդհանուր «ունիվերսալ» և տարածքային «տերիտորիալ»: Ունիվերսալ սկզբունքը որդեգրած պետությունների շարքին են դասվում Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան և այլն, իսկ տարած-

քային սկզբունքի կողմնակիցներից է Հոլանդիան<sup>8</sup>:

**Ունիվերսալ սկզբունքի** էությունն այն է, որ պարտապանի գլխավոր գրասենյակի կամ պետական գրանցման վայրի կամ հիմնական հետաքրքրությունների կենտրոնի պետությունում հարուցվում է մեկ միասնական սնանկության վարույթ, ընդ որում այդ վարույթը ներառում է պարտապանին պատկանող ամբողջ գույքը, որտեղ էլ, որ այն գտնվի: Ունիվերսալ սկզբունքի պարագայում կարող են առաջանալ որոշակի հարցեր, մասնավորապես, եթե սնանկության վարույթը հարուցվում է պարտապանի պետական գրանցման վայրի պետությունում, ապա պարտապանի գրանցման վայրում կարող է ո՛չ ակտիվ լինել, ո՛չ էլ պարտատեր, կամ եթե հարուցվում է այն պետությունում, որտեղ պարտապանը հիմնական գործունեություն է ծավալում, ապա խնդիրն այն է, որ պարտապանը կարող է նույնաժամակ գործունեություն իրականացնել մի քանի պետությունում և դժվար լինի տարբերել, թե որն է հիմնական գործունեության վայրը և այլն: Այդուհանդերձ, ունիվերսալ սկզբունքի մոտեցման կողմնակիցները որպես վերջինիս առավելություններ նշում են այն, որ տվյալ դեպքում կիրառվում են վարույթի միասնական կանոններ, պարտապանի ամբողջ գույքը կենտրոնանում է մեկ վայրում, բոլոր պարտատերերն օգտվում են հավասար իրավունքներից: Ընդ որում՝ գիտատեխնիկական ժամանակակից առաջընթացի պայմաններում բոլոր պարտատերերի համար հնարավոր է ապահովել սնանկության օտարերկրյա վարույթին ներգրավվելու համապատասխան հնարավորություններ<sup>9</sup>:

**Տարածքային սկզբունքի** էությունն այն է, որ սնանկության օրենսդրության կիրառման շրջանակը սահմանափակվում է այն պետության տարածքով, որի նկատմամբ տարածվում է այն պետության իրավասությունը, որը ընդունել է այդ օրենսդրությունը: Այս պարագայում յուրաքանչյուր պետությունում, որտեղ

պարտապանը ունի գույք կամ որտեղ գտնվում են նրա տարբեր մասնաճյուղերը և ձեռնարկությունները, հարուցվում են տարբեր վարույթներ: Ընդ որում՝ ներկայումս նշված սկզբունքը միջազգային սնանկության առջև դրված խնդիրներն ավելի դյուրին է լուծում:

Գոյություն ունի նաև երրորդ՝ **մոդիֆիկացված մոտեցում**, համաձայն որի՝ պետությունը պահանջում է իր ներպետական օրենսդրության ունիվերսալ կիրառում, սակայն փոխարենը չի ճանաչում մյուս պետությունների օրենսդրության համանման ունիվերսալ կիրառումը:

Վերոնշյալ սկզբունք-մոտեցումների տարբերությունը և, ընդհանրապես, միջազգային սնանկության բարդությունն այն է, որ տարբեր երկրներում կիրառվող սնանկության իրավական կարգավորման համակարգերը միմյանցից տարբերվում են յուրաքանչյուր երկրի օրենսդիրների կողմից հետապնդվող կոնկրետ նպատակներով: Այդ նպատակները բազմաթիվ են, մասնավորապես՝

1. առավելագույնս բավարարել պարտատերերի պահանջները,
2. փրկել գործունեությունը շարունակելու հնարավորություն ունեցող անհատ գործարարի կամ իրավաբանական անձի բիզնեսը,
3. միջոցները արդար բաժանել կողմերի միջև,
4. վերակազմավորել դեռևս չլուծարված ընկերությունը և այլն:

Արդյունքում առաջնային խնդիրը մի իրավական համակարգի համար լինում է պարտատերերի պահանջների առավելագույնս բավարարումը (Մանֆրեդա Բալցի մոդելը), մյուսների համար բիզնեսի փրկությունը և աշխատատեղերի պահպանումը (անգլիական մոդելը): Կան նաև երրորդ մոդել (ամերիկյան, ֆրանսիական և ռուսական), որին կարելի է ասել՝ հետևում է նաև ՀՀ-ն: Ըստ այդ մոդելի՝ առաջնային է համարվում միջոցների արդյունավետ բաշխման միջոցով մակրոէկոնոմիկական գործառույթների



իրականացումը: Այսինքն, անվճարու-  
նակության իրավական կարգավորման  
այնպիսի մեխանիզմների մշակումը, որը  
հնարավորություն է տալիս, չխախտե-  
լով պարտատերերի շահերը, պահպանել  
կազմակերպության գործունեությունը<sup>10</sup>:

Միջազգային (անդրսահմանային)  
սնանկության վերաբերյալ միջազգային  
միասնական իրավական կարգավորումը  
ևս բացակայում է, որի հետևանքով հա-  
մապատասխան պետություններում սո-  
վորաբար հարուցվում են սնանկության  
գործով անկախ (զուգահեռ) վարույթներ  
կամ էլ կախված պետությունների քաղա-  
քական և իրավական մոտեցումների նմա-  
նությունից փոխադարձության սկզբունքի  
հիման վրա պարտքերի կարգավորման  
փորձեր են արվում, որոնք այնքան էլ հա-  
մակարգված բնույթ չունեն<sup>11</sup>:

Այսպես, ՌԴ-ում «Սնանկության մա-  
սին» ՀՀ օրենքով սնանկության վարույ-  
թին մասնակցող ազգային և օտարերկրյա  
պարտատերերին տրամադրվում են հա-  
վասար իրավունքներ՝ սնանկության գոր-  
ծով օտարերկրյա դատարանների որո-  
շումները կարող են ճանաչվել ՌԴ-ում  
փոխադարձության սկզբունքի հիման  
վրա:

Համանման կարգավորում նախա-  
տեսված է նաև Գերմանիայի օրենսդրու-  
թյամբ, որը սահմանում է, որ գերմանա-  
կան դատարանները կարող են ճանաչել  
օտարերկրյա դատարանների որոշում-  
ները Գերմանիայի տարածքում գտնվող  
ակտիվների մասով: Օտարերկրյա վա-  
րույթների ճանաչումը չի բացառում Գեր-  
մանիայի տարածքում առանձին սնան-  
կության վարույթի հարուցումը, որը, սա-  
կայն, սահմանափակված է լինելու Գեր-  
մանիայում գտնվող ակտիվներով:

Ֆրանսիայի օրենսդրությունը ևս  
ֆրանսիացի պարտատերերի համար նա-  
խատեսում է հնարավորություն ցանկա-  
ցած պարտապանի նկատմամբ սկսելու  
սնանկության վարույթ, եթե պետության  
տարածքում կան ակտիվներ: Անգլիայի  
և ԱՄՆ-ի օրենսդրությունները թույլ են

տալիս հարուցել սնանկության վարույթ  
օտարերկրյա կազմակերպությունների  
նկատմամբ:

Միջազգային սնանկության իրավա-  
կան կարգավորման վերաբերյալ տար-  
բեր պետություններում մոտեցումների  
նման տարբերությունը չի նպաստում  
խնդրի արդյունավետ լուծմանը, գործերի  
քննության ժամկետը ձգձգվում է, պար-  
տապանին պատկանող և այլ պետությու-  
նում գտնվող ակտիվները վտանգի են են-  
թարկվում «օտարվում է երրորդ անձանց  
կամ այլ կերպ նվազում է պարտատերե-  
րի պահանջների ամբողջական բավա-  
րարում ստանալու հնարավորությունը»,  
տուժում են օտարերկրյա պարտատերե-  
րի շահերը և համաշխարհային տնտեսու-  
թյունը ընդհանրապես:

Սնանկության վերաբերյալ միջազ-  
գային կարգավորման առաջին փորձերը  
կատարվել են երկկողմանի համաձայ-  
նագրերի մակարդակով, որոնք բազմա-  
թիվ են, հատկապես տնտեսական սերտ  
կապեր ունեցող պետությունների միջև:  
Օրինակ՝ Ֆրանսիան մի շարք պետու-  
թյունների հետ ունի նմանատիպ համա-  
ձայնագրեր «Շվեյցարիա 1869 թ., Բելգիա  
1889 թ., Իտալիա 1930 թ., Մոնակո 1950  
թ., Ասվորիա 1979 թ. և այլն»<sup>12</sup>: Նշված  
համաձայնագրերով պայմանավորվող  
կողմերը եկել են համաձայնության դա-  
տարանների որոշումների փոխադարձ  
ճանաչման, պարտապանի գործունեու-  
թյան հիմնական վայրի և օտարերկրյա  
կառավարչի իրավասության ճանաչման  
և այլ հարցերի վերաբերյալ:

Բազմիցս փորձեր են կատարվել ավե-  
լի լայն շրջանակի պետությունների միջև  
համաձայնության գալու, այն է՝ ունիվեր-  
սալ միջազգային կոնվենցիաներ մշակե-  
լու ուղղությամբ, սակայն, որպես կանոն,  
մեկ միասնական վարույթ հարուցելու  
հարցում առաջ էին գալիս տարածայնու-  
թյուններ, և աստիճանաբար ձևավորվում  
էր համատեղ «զուգահեռ» ներպետական  
վարույթների հարուցման սկզբունքը:

Միջազգային իրավական փաս-

տարրերի շարքում ուշագրավ են հետևյալ ակտերը՝ «Միջազգային սնանկության մասին» 1960 թ. եվրոպական կոնվենցիա «*ըստ էության նախարեստում էր մեկ միասնական վարույթի սկզբունքը*», «Սնանկության միջազգային որոշակի ոլորտների մասին» 1990 թ. եվրոպական կոնվենցիա «*ըստ էության նախարեստում էր կառավարչի իրավասության փոխադարձ ճանաչում, հարկապես գույքի հավաքագրման գործընթացում, համարեղ վարույթների հարուցման հնարավորություն, ընդ որում՝ հիմնական վարույթը հարուցվում էր պարրապակնի գործունեության հիմնական վարույթի պետությունում «այդպիսին հանդիսանում է ընկերության կառավարման մարմնի գրավելու վայրը*»», «Միջազգային սնանկության մասին» 1995 թ. եվրոպական միության կոնվենցիան, «Միջազգային սնանկության վերաբերյալ» 1997 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի տիպային օրենք, ինչպես նաև՝ միջազգային սնանկության կարգավորման մոդելներն ԱՊՀ երկրների շրջանակում<sup>13</sup>:

Նկատի ունենալով, որ վերոնշյալ կոնվենցիաներից ԵՄ անդամների կողմից առավել շատ վավերացում ստացել է «Միջազգային սնանկության մասին» 1995 թ. Եվրոպական միության կոնվենցիան, որը առավելապես համատեղում է միասնական և երկրորդային վարույթների մեթոդները՝ ապահովելով վերջիններիս միջև փոխազդեցության համակարգը միջազգային սնանկության դեպքում, առաջնահերթ կոլիտարկենք հենց այդ կոնվենցիան «այսուհետ նաև՝ Կոնվենցիա»:

Այսպես, Կոնվենցիայի համաձայն՝ Եվրոպական միության տարածքում հարուցված հիմնական վարույթը ինքնաշխատ (ավտոմատորեն) ճանաչվում է Եվրոպական միության մյուս բոլոր անդամ պետությունների տարածքում: Հիմնական վարույթը հարուցվում է պարտապակնի հիմնական գործունեության վայրում, որը պարտապակն ընկերության կառա-

վարման մարմնի գտնվելու վայրն է: Հիմնական վարույթի ճանաչումը չի բացառում ԵՄ տարածքում երկրորդային վարույթների հարուցման հնարավորությունը «որտեղ պարտապակն ունի իր կառուցվածքային ստորաբաժանումը կամ ծավալում է որոշակի գործունեություն»: Երկրորդային վարույթը սահմանափակվում է տվյալ պետության տարածքում գտնվող ակտիվներով: Այն կարող է հարուցվել նաև մինչև հիմնական վարույթի հարուցումը, եթե տվյալ պետությունում վրա են հասել սնանկության վարույթ հարուցելու համապատասխան հատկանիշները: Այդուհանդերձ, պետք է նշել, որ հիմնական վարույթ հարուցելուց հետո սնանկության գործով կառավարիչը իրավունք ունի պահանջել դադարեցնել երկրորդային վարույթը, եթե դա կնպաստի ակտիվների ավելացմանը կամ էլ հաշտություն կնքելուն: Երկրորդային վարույթները կախման մեջ դնելով հիմնական վարույթից՝ Կոնվենցիան ապահովում է դրանց միջև ներդաշնակությունը: Երկրորդային վարույթների դեպքում կիրառվում է վարույթ հարուցած պետության օրենսդրությունը, և տվյալ վարույթի շրջանակում պարտապակնի գույքի կազմի մեջ չի ներառվում արտասահմանում գտնվող պարտապակնի պատկանող գույքը: Ընդ որում՝ Կոնվենցիայի համաձայն՝ երկրորդային վարույթին մասնակցում են այն պարտատերերը, որոնց պահանջները ճանաչվել են հիմնական վարույթի շրջանակում, և նրանց պահանջները հերթագրվում են երկրորդային վարույթի պետության ներպետական օրենսդրության հիմքով: Կարևոր է ընդգծել, որ Կոնվենցիայի համաձայն՝ սնանկության բոլոր վարույթները հարուցվում են որպես լուծարային, այսինքն՝ վարույթի ընթացքում հետապնդվում է պարտապակնի գույքի իրացման հաշվին պարտատերերի պահանջների բավարարման նպատակ, և հետագայում, կախված հանգամանքներից, լուծարային վարույթը կարող է վերափոխվել ֆինանսական



առողջացման ծրագրի շրջանակներում գործող վարույթի կամ կարող է կնքվել հաշտության համաձայնություն: Նման կարգավորմամբ Կոնվենցիայի հեղինակները նպատակ են ունեցել բացառել պարտապանի կամ պարտատերերի շահերին առաջնություն տվող երկու տարբեր իրավական կարգավորումների միջև մրցակցությունը: Ինչպես նշել ենք վերոգրյալում, քննարկվող Կոնվենցիան ԵՄ անդամների կողմից ամենից շատ վավերացում ստացած կոնվենցիան է՝ հիշատակված մյուս կոնվենցիաների համեմատ, այնուամենայնիվ, այն ներկայումս ուժի մեջ չի մտել, քանի որ ԵՄ անդամներից Անգլիան չի վավերացրել այն «հարկավոր է ԵՄ բոլոր անդամ-պետությունների կողմից վավերացում»: Հավելենք, որ Կոնվենցիան վերաբերվում է միայն ԵՄ շրջանակում սնանկության հարցերի շուրջ համագործակցությանը և չի տարածվում ԵՄ անդամ, երրորդ պետությունների հետ հարաբերությունների վրա:

Միջազգային սնանկության մասին ՅՈՒՆՍԻՏՐՍԻ-ի տիպային օրենքը նախատեսել է սնանկության գործով համագործակցության արդյունավետ ռեժիմ՝ օտարերկրյա որոշումների ճանաչում, ազգային դատարաններում հարուցված սնանկության համապատասխան վարույթներին օտարերկրյա անձանց ներկայացված լինելու հնարավորություն և այլն: Ենթադրվում է, որ նման ռեժիմը համատեղելի կլինի բոլոր իրավական համակարգերի հետ<sup>14</sup>: Բայցևայնպես, պետք է նշել, որ տիպային օրենքը կարգավորման բավականին նեղ շրջանակ ունի, քանի որ դիտարկում է միայն այն դեպքերը, երբ պարտատերերի մեծ մասը գտնվում են մեկ պետության տարածքում, իսկ ակտիվները տեղաբաշխված են մեկից ավելի պետություններում: Մի քանի պետություններում պարտատերերի և ակտիվների հավասարաչափ տեղաբաշխման պայմաններում տիպային օրենքը կատարում է միայն տեղեկատվության փո-

խանակման գործառույթ դատարանների և իրավասու մարմինների միջև, ինչպես նաև ապահովում է տեղեկատվության տրամադրումը օտարերկրյա պարտատերերին: ՅՈՒՆՍԻՏՐՍԻ-ի տիպային օրենքն ուժի մեջ չի մտել, քանի որ ոչ մի պետություն այն չի ներառել իր ազգային օրենսդրության մեջ, չնայած նրան, որ մի շարք պետություններ «ընդհանուր իրավունքի համակարգի երկրները» դիտարկում են նման հնարավորությունը: Հավելենք, որ ներկայումս գոյություն ունի Օրենսդիր մարմինների համար սնանկության մասին օրենսդրության հարցերի վերաբերյալ ՅՈՒՆՍԻՏՐՍԻ-ի թվով 3 ուղեցույց՝ 2004 թ., 2010 թ., 2013 թ., որոնցից առաջինում «բաղկացած է առաջին և երկրորդ մասերից» բացահայտվում են առանցքային նպատակները, մշակվում են սնանկության մասին օրենսդրության արդյունավետ և իրատեսական մեխանիզմները, ինչպես նաև սահմանվում են վերջիններիս ապահովմանն ուղղված հիմնական կարգավորումները: Երկրորդը «երրորդ մաս» նվիրված է սնանկության դեպքում ձեռնարկատիրական խմբերի ռեժիմին: Ընդ որում, ՅՈՒՆՍԻՏՐՍԻ-ի մեկնաբանմամբ «ձեռնարկատիրական խումբ» եզրույթը մեկ իրավաբանական անձ ստեղծելու համար միավորված երկու կամ ավելի տարբեր տնտեսական կազմակերպություններն են «խմբի անդամներ», որոնց միջև կապերը կրում են վերահսկողական «ուղղակի կամ միջնորդավորված» կամ սեփականության բնույթ: Եվ վերջապես երրորդ հրատարակությունը «չորրորդ մաս» վերաբերում է սնանկությանը նախորդող ժամանակահատվածում ընկերությունների տնօրենների պարտականություններին<sup>15</sup>:

Ներկայումս որոշակի աշխատանքներ են ընթանում նաև ԱՊՀ երկրների համար սնանկության մասին տիպային օրենքի մշակման ուղղությամբ: Ռուս հայտնի իրավաբան Վ. Ֆ. Պոպոնոպովը, նկատի ունենալով ԽՍՀՄ նախկին անդամ պետությունների միջև

սերտ տնտեսական, քաղաքական և մշակութային կապերը, ներպետական օրենսդրությունների համակարգերի բավականաչափ համատեղելի լինելու հանգամանքը, տիպային օրենքների մշակման փորձը «օրինակ՝ ԱՊՀ քաղաքացիական օրենսգիրքը», գտնում է, որ խելամիտ կլիներ ԱՊՀ շրջանակներում միջազգային սնանկության կարգավորման մոդելը մշակելիս օգտագործել մեկ միասնական վարույթի մեթոդը<sup>16</sup>:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ միջազգային սնանկության իրավահարաբերությունների միջազգային իրավակարգավորման երկարաժամկետ փորձերը դեռ արդյունքի չեն հասել, քանի որ նրանցից ոչ մեկը մինչ այժմ ուժի մեջ չի մտել:

Մասնագիտական գրականության մեջ ճիշտ դիտարկում կա առ այն, որ միջազգային սնանկության շրջանակում, ավելի շատ քան միջազգային մասնավոր իրավունքի այլ ոլորտներում, առկա է պետությունների կողմից իրենց հանրային շահերի պաշտպանության ձգտումը<sup>17</sup>: Արդյունքում, մի պետության համար առաջնային խնդիր է առավելագույնս բավարարել պարտատերերի պահանջները, մյուսների համար՝ պարտապանի վճարունակության վերականգնումը<sup>18</sup>: Կարծում ենք, որ նշվածի հիմքով է, որ ներկայումս չկա միջազգային սնանկության վերաբերյալ ուժի մեջ մտած ունիվերսալ միջազգային գոնե մեկ պայմանագիր, որը վավերացված կլիներ բավարար չափի պետությունների կողմից:

Արդյունքում, ստեղծվում է մի իրավիճակ, երբ միջազգային սնանկության առնչությամբ պետությունները կանգնում են որոշակի խնդիրների առջև, իսկ արդեն իսկ մշակված և գոյություն ունեցող միջազգային իրավական ակտերն ի գործում չեն համակարգային լուծում տալ այդ խնդիրներին: Նման պայմաններում կարծում ենք՝ պետք է դարձյալ անդրադարձ կատարել ներկայումս ընթացող համաշխարհայնացման էությունը և որոշել, թե

միջազգային սնանկության հարաբերություններն իրավական կարգավորման ենթարկելիս ո՞ր պետության իրավունքով, կամ հնարավոր ի՞նչ այլ աղբյուրների շրջանակում պետք է կարգավորվեն: Սա շատ բարդ խնդիր է, որը կանգնած է միջազգային մասնավոր հարաբերությունների իրավական կարգավորման ճանապարհին, և որի լուծմանը պետք է ուղղվեն իրավագիտական ջանքերը:

Կարևոր ենք համարում ընդգծել, որ ներկայումս ընթացող համաշխարհայնացման պայմաններում ակնհայտ է, որ այն պահանջներ է ներկայացնում պետությունների հասարակական-պետական կյանքի բոլոր բնագավառներին, որոնք իրենց զարգացումներում պետք է ելնեն հենց այս երևույթի գիտակցման դիրքերից, և հարկ եղած դեպքում իրենց ազգային շահը ստորադասեն միջազգային համաձայնությամբ ձեռք բերած իրավական կարգավորումներին:

Սույն աշխատանքում կատարած ուսումնասիրությունների արդյունքում կարծում ենք, որ պետությունների կողմից համընդհանուր ճանաչում կարող են ստանալ իրավական կարգավորման այնպիսի մեխանիզմները, որոնք խստագույնս կհաշվառեն և կզուգակցեն ունիվերսալ և տերիտորիալ իրավական կարգավորման պահանջները: Նման մոտեցումը, ըստ էության, ընկած է նաև «Միջազգային սնանկության մասին» 1995 թ. Եվրոպական միության կոնվենցիայի հիմքում:

Բացի այդ, կարծում ենք՝ միջազգային սնանկության վերաբերյալ պետությունների կողմից միասնական համաձայնության գալու համար անհրաժեշտ նախադրյալներ կարող են հանդիսանալ նաև պետությունների օրենսդրությունները հնարավորինս նույնանման կարգավորումներով նախատեսելը: Մասնավորապես, կարելի է եզրագծել որոշակի հարցերի շրջանակ, որոնց շուրջ միասնական կարգավորման արդյունքում հնարավոր կլինի ստեղծել համագործակցության և



## Միջազգային սնանկություն

զարգացման հեռանկարներ պարունակող ունիվերսալ միջազգային փաստաթուղթ՝ առավելագույնս ապահովելով սնանկության վարույթի փուլերի հաջորդականությունը՝ վարույթի հարուցման պահից մինչև պարտապանին պարտավորությունների կատարումից ազատելով վարույթի ավարտը: Որպես առանցքային տարրեր կարող են լինել հետևյալները.

- սնանկության վարույթի հարուցման համար ստանդարտ պահանջների սահմանումը,
- անվճարունակության հատկանիշների միասնական չափանիշները,
- ցանկացած գործողության վրա մտադրվում տարածելու հնարավորությունը, այդ թվում՝ ապահովված պարտատերերի կողմից պարտապանի գույքի կազմում ներառված ակտիվների մատվ, եթե ապահովված պարտատերը չի ծանուցում դատարանին ապահովված իրավունքի առարկայի նկատմամբ մտադրվում չտարածելու մասին,
- վարույթի հարուցումից հետո ֆինանսավորում ստանալու հնարավորությունը,
- բոլոր, այդ թվում նաև՝ օտարերկրյա պարտատերերի մասնակցության ապահովումը,
- արագացված առողջացման վարույթի հնարավորությունը,
- պահանջների ներկայացման և ստուգման պարզ գործընթացը,
- անհաջող վերակազմակերպման դեպքում վերակազմակերպման վարույթը լուծարման վարույթի վերափոխելու հնարավորությունը,
- պարտապանի կողմից պարտավորությունների կատարումից ազատելու և սնանկության վարույթն ավարտելու վերաբերյալ հստակ կարգավորումների նախատեսումը,
- սնանկության գործով կառավարչի լիազորությունների սահմանումը և

օտարերկրյա պետության կողմից նրա իրավասության ճանաչումը և այլն:

Սույն աշխատանքում կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա այժմ անդրադառնանք ՀՀ-ում գործող միջազգային սնանկության մասին իրավական կարգավորումներին, զարգացման միտումներին և դրանց վերաբերյալ մեր առաջարկներին: Ընդ որում՝ նշված հարցի վերաբերյալ հայրենական մասնագիտական գրականությունը բացակայում է:

Այսպես, «Սնանկության մասին» օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ *օտարերկրյա պետությունների դատարանների անվճարունակության (սնանկության) գործերով վճիռները (որոշումները) Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, իսկ դրանց բացակայության դեպքում՝ փոխադարձության սկզբունքով*: Նույն օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *եթե պարտապանը սեփականության իրավունքով գույք ունի այլ երկրներում, ապա կառավարիչը Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում, Հայաստանի Հանրապետության համապատասխան դատարանի որոշման համաձայն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության միջոցով դիմում է այդ երկրների դատարաններին՝ նշված գույքն արգելադրելու մասին հանձնարարությամբ*: Այլ երկրներում պարտապանին պարտավորող գույքի արգելադրումը կարող է իրականացվել միայն տվյալ երկրների օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ-ում ևս գործում է ՌԳ-ի և Գերմանիայի որդեգրած մոտեցումները օտարերկրյա դատարանների որոշումների ճանաչման և փոխադարձության սկզբունքի վերաբեր



րյալ: Միևնույն ժամանակ, ՀՀ օրենսդրությամբ նախատեսվում է հնարավորություն միջազգային պայմանագրերի հիման վրա դատական կարգով հանձնարարելու արգելանք դնել այլ երկրներում գտնվող պարտապանի գույքի վրա, որը, սակայն, պետք է իրականացվի տվյալ երկրի օրենսդրությամբ նախատեսված կարգով:

Պետք է փաստենք, որ չնայած վկայակոչված իրավական նորմերում խոսք է գնում միջազգային պայմանագրերի մասին, սակայն այդ կարգավորումները դեռևս հռչակագրային բնույթ են կրում, քանի որ ՀՀ կողմից նման պայմանագրեր մինչ օրս չեն կնքվել:

Միջազգային սնանկության վերաբերյալ ՀՀ իրավական կարգավորումները, թերևս, այսօրվա են: «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքում համապատասխան կարգավորումներն ընդհանրապես բացակայում են, ինչը, կարծում ենք, պարզապես անընդունելի է: Այսպես, միջազգային շուկաներին ՀՀ մասնակցությունը դրսևորվում է նաև ֆինանսական կազմակերպությունների կողմից, որոնց ինտեգրման հիմնական ուղիներն են ֆինանսական ենթակառուցվածքները, կապիտալի շուկան և առանձին ֆինանսական հաստատությունների հետ գործընկերային հարաբերությունները, որոնց շարքում հատկապես կարևորում ենք վերջին բաղադրիչը: Գործընկերային հարաբերությունների տեսանկյունից նշված կապն ապահովվում է միջազգային ֆինանսական հաստատությունների հետ համագործակցությամբ՝ ներգրավված վարկերի, առևտրի ֆինանսավորման գործիքների և տարբեր վարկային ծրագրերի միջոցով: Ինտեգրման նշված ուղին մեծ դեր է խաղում Հայաստանի բանկային համակարգի զարգացման գործում և, բնական է, որ ֆինանսական կազմակեր-

պությունների միջազգային սնանկության իրավական կարգավորումների և մեխանիզմների բացակայության պայմաններում կարող են լուրջ խնդիրներ ի հայտ գալ, ընդհուպ մինչև կարող են վտանգվել ֆինանսական հաստատությունների հետ գործընկերային հարաբերությունները: Այդ իսկ պատճառով առաջարկում ենք օրենսդրական մակարդակով լուծում տալ այս հարցին՝ որպես ելակետ ընդունելով միջազգային սնանկության ինստիտուտի կայացման և զարգացման վերաբերյալ ներքոգրյալ մոտեցումները:

Այժմ փորձենք հասկանալ, թե ստեղծված պայմաններում ի՞նչ մեխանիզմներով և ընթացակարգերով կարելի է համակարգային լուծում տալ բարձրացված հարցերին:

Այսպես, վերլուծելով մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված մոտեցումները և կարգավորումները, ինչպես նաև հաշվի առնելով դրանց կիրառման արդյունավետությունը՝ գտնում ենք, որ միջազգային սնանկության կարգավորումների վերաբերյալ գործընթացը ՀՀ-ում նպատակահարմար կլինի սկսել երկկողմանի համաձայնագրերի կնքումից, հատկապես այն պետությունների հետ, որոնց հետ առկա են տնտեսական սերտ կապեր, օրինակ, ՌԴ կամ ԵԱՏՄ անդամ այլ պետության: ԱՊՀ անդամ երկրների միջև արդեն իսկ գոյություն ունեն միջպետական համաձայնագրերի կնքման մի շարք օրինակներ ««Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Միևսկի 1993 թ. կոնվենցիան, «Համապատասխան պետությունների և այլ երկրների քաղաքացիների միջև ներդրումային վեճերը կարգավորելու մասին» Վաշինգտոնյան կոնվենցիան և այլն», հետևապես գտնում ենք, որ համատեղ փորձի առկայության հաշվառմամբ մոր միջպետական նախագծերը կարող են բարեհաջող ավարտ ունենալ:

Ընդ որում՝ նշված երկկողմանի հա-



մաճայնագրերը մշակելու փուլում անհրաժեշտ է կան դրանցում արտացոլել ունիվերսալ միջազգային փաստաթուղթ մշակելու համար անհրաժեշտ սույն աշխատանքում վերը նշված միասնական առանցքային տարրերը, կան էլ այդ փաստաթղթերը մշակելիս ելնել այն գիտակցումից, որ ներկայումս ընթացող համաշխարհայնացման պայմաններում ի վերջո ի հայտ է գալու միջազգային սնանկության վերաբերյալ միջազգային այնպիսի փաստաթուղթ, որն ընդունելի է լինելու բավարար չափով պետությունների կողմից, և նման փաստաթղթին անդամակցելը ավելի դյուրին կդառնա այն պարագայում, երբ այլ պետությունների հետ արդեն իսկ ձևավորված միջազգային սնանկության հարաբերությունները «երկկողմանի» բովանդակեն վերոնշյալ ենթադրյալ ունիվերսալ փաստաթղթում ամրագրված մոտեցումները:

Կարծում ենք՝ չպետք է սահմանափակվել միայն երկկողմանի պայմանագրերով և, համընթաց քայլերով ներկայումս տեղի ունեցող աշխարհաքաղաքական իրողությունների հետ, միջազգային սնանկության ինստիտուտի մասով ներպետական օրենսդրությունը պետք է զարգացնել միջազգային հեղինակավոր փաստաթղթերում ամրագրված մոտեցումները որդեգրելով և դրանք իմպլեմենտացնելով: Ընդ որում՝ այս կոնտեքստում վերջին մի քանի տարիների ընթացքում ՀՀ-ն որոշակի հաջողություններ է գրանցում:

Ուշագրավ է որ, օրինակ, ՀՀ Սահմանադրական դատարանն իր որոշումներում ևս կարևորում է սնանկության վերաբերյալ միջազգային մոտեցումների ամրագրումը ներպետական օրենսդրության մեջ, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրական դատարանը իր որոշումներից մեկում մեջբերում է սույն աշխատանքում միջազգային ունիվերսալ փաստաթղթերի շարքում վկայակոչված Օրենսդիր մարմինների համար սնանկության մասին օրենսդրության հարցերի վերաբերյալ

ՅՈՒՆՍԻՏՐԱԼ-ի ուղեցույցի մոտեցումները՝ նշելով, որ «Մնանկության մասին» ՀՀ օրենքի հետագա բարեփոխումների ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել ՄԱԿ-ի միջազգային առևտրային իրավունքի հարցերով հանձնաժողովի կողմից 2004 թվականի հունիսի 25-ին ընդունված Օրենսդիր մարմինների համար անվճարունակության մասին օրենսդրության հարցերով ուղեցույցի դրույթները<sup>19</sup>: Ստացվում է, որ ՀՀ իրավակիրառ մարմինները ևս գիտակցում են որոշակի համընդհանուր սկզբունքներ որդեգրելու և դրանք ՀՀ օրենսդրության մեջ արտացոլելու անհրաժեշտությունը, ինչպես նաև իրենց գործունեությամբ առավելագույնս նպաստում են այդ գործընթացի արագացմանը:

Հաջորդիվ, Համաշխարհային բանկի կողմից յուրաքանչյուր տարի հրատարակվում է աշխարհի շուրջ 190 պետությունների բիզնես կարգավորումների համեմատական վերլուծության և արդյունավետության բարձրացման վերաբերյալ հետազոտությունների ձեռնարկ՝ «Doing Business»:

Շուրջ 190 պետություն յուրաքանչյուր տարի փոփոխելով ներպետական իրավական կարգավորումները՝ փորձ է կատարում բարելավել իր պետության դիրքերը Համաշխարհային բանկի կողմից հրատարակվող «Doing Business» զեկույցում: Նշված զեկույցում հետազոտություններ են տարվում նաև սնանկության մասով, մասնավորապես՝ կախված յուրաքանչյուր պետությունում այդ ոլորտում կատարված բարեփոխումների որակից՝ նշված պետությունը Համաշխարհային Բանկի «Doing Business» զեկույցում սնանկության ցուցիչով զբաղեցնում է որոշակի դիրք, այսինքն՝ պետությունները նպատակ ունենալով զբաղեցնել առաջատար դիրքեր<sup>20</sup>, այդ թվում նաև սնանկության ոլորտում, հետևում են «Doing Business» զեկույցի պահանջներին, ինչն էլ ուղղակիորեն հանգեցնում է որոշակի պետությունների իրավական

կարգավորումների միասնականացմանը, և ՀՀ-ն, որպես այդ զեկույցի մասնակից, անմասն չի մնում իրավական կարգավորումների միասնականացման գործընթացից:

Վերոնշյալ դիտարկումը հիմք է տալիս փաստելու, որ պետությունների կողմից ընդունելի ունիվերսալ միջազգային միասնական փաստաթղթի մշակումն ու վավերացումը ընդամենը ժամանակի հարց է, քանի որ, ինչպես արդեն նշել ենք սույն աշխատանքում, ունիվերսալ մի-

ջազգային փաստաթղթի ձևավորման ու ընդունման նախադրյալը սնանկության վերաբերյալ պետությունների համանման կարգավորումների որդեգրումն է: Հետևապես, այս կոնտեքստում ՀՀ համար լրացուցիչ անգամ կարևորվում է երկկողմանի պայմանագրեր կնքելու և միջազգային ունիվերսալ կառույցներին անդամակցելու միջոցով միջազգային միասնական մոտեցումները որդեգրելու անհրաժեշտությունը:

---

<sup>1</sup> Стрельников К.А., Правовая глобализация: основные тенденции // Журнал «Юридический мир», 2008, N10.

<sup>2</sup> Михайлова М.Д., Некоторые проблемы глобализации // Журнал «Международное публичное и частное право». 2009, N 3.

<sup>3</sup> Ա. Հայկյանց, Միջազգային մասնավոր իրավունք, Գաաազհրք, ԵՊՀ հրատ., 2010, էջ 3:

<sup>4</sup> Ա. Հայկյանց, Միջազգային մասնավոր իրավունք, Գաաազհրք, ԵՊՀ հրատ., 2010, էջ 3:

<sup>5</sup> <http://www.un.org/russian/documen/gadoes/convres/r29-3281.pdf>.

<sup>6</sup> Ануфриева Л.П., Международное частное право: в 3 т. Т. 3: Трансграничные банкротства. Международный коммерческий арбитраж. Международный гражданский процесс, М., БЕК, 2001, с. 8.

<sup>7</sup> Ануфриева Л.П., Международное частное право, Т. 3, с. 9.

<sup>8</sup> Ануфриева Л.П., Международное частное право: в 3 т. Т. 3, Трансграничные банкротства. Международный коммерческий арбитраж. Международный гражданский процесс, М., БЕК, 2001, с. 24-25,

<sup>9</sup> Степанов В.В., Несостоятельность в России, Англии, Франции, Германии, М., 1999, с. 174-176:

<sup>10</sup> Степанов В.В., Несостоятельность в России, Англии, Франции, Германии, М., 1999, с. 23.

<sup>11</sup> Попондопуло В.Ф., Банкротство: Правовое регулирование. Научно-практическое пособие, Москва, 2015, с. 414.

<sup>12</sup> Степанов В.В., Несостоятельность в России, Англии, Франции, Германии, М., 1999, с. 177-180.

<sup>13</sup> Попондопуло В.Ф., Банкротство: Правовое регулирование. Научно-практическое пособие, Москва, 2015, с. 414-418.

<sup>14</sup> Руководство ЮНСИТРАЛ для законодательных органов по вопросам законодательства о несостоятельности, первая и вторая части (2004 год), с. 93-94.

<sup>15</sup> [http://www.uncitral.org/uncitral/ru/uncitral\\_texts/insolvency/2004Guide.html](http://www.uncitral.org/uncitral/ru/uncitral_texts/insolvency/2004Guide.html).

<sup>16</sup> Попондопуло В.Ф., Банкротство: Правовое регулирование, Научно-практическое пособие, Москва, 2015, с. 421.

<sup>17</sup> Ануфриева Л.П., Международное частное право: т. 3, с. 3.

<sup>18</sup> Բարսեղյան Տ. Վ., Գործարարական իրավունք, Գաաազհրք, ԵՊՀ հրատ., 2009, էջ 153:

<sup>19</sup> ՀՀ Սահմանադրական դատարանի 31.01.2017 թ. ՍԳՈ 1340 որոշում:

<sup>20</sup> <http://www.doingbusiness.org/content/dam/doingBusiness/media/Annual-Reports/English/DB2018-Full-Report.pdf>.

ՀՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ 2019 7 - 8 (241-242)



## RESUME - РЕЗЮМЕ

### INTERNATIONAL (TRANSBOUNDARY) BANKRUPTCY

**N. M. Sahakyan**

*Applicant at the Chair of Civil Law and Civil Procedure,  
Institute of Law and Policy of the Russian University of Armenia*

**A. H. Dunamalyan**

*Candidate of applicant of judge*

In this article we have examined the international bankruptcy as an institution of private international law, the principles of international bankruptcy, the legal norms of different countries, international regional and universal legal documents, as well as prospects for the creation and development of this institution. Based on the findings and analyzes, some proposals were developed that can ensure the development and further improvement of the institution of international bankruptcy in Armenia. International legal approaches were proposed and the need to harmonize national legislation with these approaches was justified.

*Keywords: international bankruptcy, universal, territorial, globalization.*

### МЕЖДУНАРОДНОЕ (ТРАНСГРАНИЧНОЕ) БАНКРОТСТВО

**Н. М. Саакян**

*Соискатель кафедры гражданского права и гражданского процесса  
Института права и политики Российско-армянского университета*

**А. Г. Дунамалян**

*кандидат в судьи*

В данной научной статье изучаются международное банкротство как институт международного частного права, принципы международного банкротства, правовые нормы разных стран, международные, региональные и универсальные правовые документы, а также перспективы создания и развития этого института. На основе выводов и анализа материала были разработаны некоторые предложения, которые могут обеспечить развитие и дальнейшее совершенствование института международного банкротства в Армении. На основе международных правовых подходов была обоснована необходимость согласования национального законодательства с ними.

*Ключевые слова: международное банкротство, универсальная, территориальная, глобализация.*

*Բանալի բառեր - միջազգային սնանկություն, ունիվերսալ, տարածքային, գլոբալիզացիա:*

**Ն. Սահակյան** - Հայ-Ռուսական համալսարանի Իրավունքի և քաղաքականության ինստիտուտի Քաղաքացիական իրավունք և քաղաքացիական դատավարության ամբիոնի հայցորդ, էլ. փոստ՝ narelawyer@gmail.com

**Ա. Գունամալյան** - դատավորի թեկնածուի հավակնորդ, էլ. փոստ՝ azatdun@gmail.com

Ներկայացվել է խմբագրություն՝ 14.08.2019, տրվել է գրախոսության՝ 16.08.2019, երաշխավորվել է իրավ. գիտ. թեկնածու, ոլոցենտ Ա. Եզեկյանի կողմից, ընդունվել է տպագրության՝ 26.09.2019